



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ծովագյուղի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Նախաայրբենական փուլի կազմակերպման նպատակները և
իրականացման ուղիները

Վերապատրաստող, մենթոր՝ Միլվա Ամրազյան

Ուսուցիչ՝ Անահիտ Մկրտչյան

Բովանդակություն

Ներածություն.....	3
Նախաալբերենական փուլի կազմակերպման նպատակները և իրականացման ուղիները.....	5
Եզրակացություն.....	14
Օգտագործված գրականության ցանկ.....	15

Ներածություն

Հայոց լեզվի մեթոդիկան ունի իր հիմնական բաժինները, ուր առանձին-առանձին քննարկվում են գրաճանաչության, ընթերցանության, քերականության ուսուցման, խոսքի զարգացման և մեթոդական աշխատանքների կազմակերպման հարցերը: Սակայն կան նաև մի շարք այնպիսի հարցեր, որոնք հայոց լեզվի մեթոդիկայի այդ հիմնական բաժիններից և ոչ մեկում չեն կարող ընդգրկվել, բայց որոնց քննարկումը կարևոր նշանակություն ունի լեզվի ուսուցման ինչպես տեսական, այնպես էլ գործնական խնդիրների ճիշտ լուծման համար:

Դրանք լեզվի ուսուցման հետ կապված այն ընդհանուր հարցերն են, որոնք հավասարապես վերաբերում են հայոց լեզվի մեթոդիկայի գրեթե բոլոր բաժիններին և բացառապես միայն մեկի հետ չեն առնչվում: Սրանք վերաբերում են գիտելիքների հաղորդման և աշակերտների մեջ կարողությունների ու հմտությունների մշակման աշխատանքի մանկավարժական ու հոգեբանական կողմերին, ինչպես նաև հայոց լեզվի մեթոդիկայի և նրա առնչակից գիտությունների՝ լեզվաբանության ու գրականության, մանկավարժության, հոգեբանության ու տրամաբանության փոխհարաբերությանը մյուս կողմերից:

Մանկավարժական գրականության մեջ բազմիցս վեճեր են ծագել մասնավոր մեթոդիկաների առանձին ու ինքնուրույն գիտություններ լինելու հարցի շուրջ: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ մասնավոր մեթոդիկաները ընդհանուր դիդակտիկայից սկսեցին անջատվել ու ինքնուրույն գիտություններ դառնալ անհամեմատ ավելի ուշ, քան մյուս գիտությունները:

Հայտնի է, որ ուսուցման ընդհանուր օրինաչափությունների ուսումնասիրության հարցով զբաղվում է դիդակտիկան, իսկ առանձին ուսումնական առարկաների դասավանդման օրինաչափությունների ուսումնասիրությամբ զբաղվում են այդ առարկաների մասնավոր մեթոդիկաները:

Դրանց միջև եղած ընդհանրություններն ու նմանությունները շատ են, որովհետև ուսուցման ընդհանուր օրինաչափությունները, որոնք մանկավարժների տասնյակ սերունդների աշխատանքի ու դպրոցի դարավոր փորձի արդյունք են, իրենց կոնկրետ կիրառությունն են գտնում մասնավոր մեթոդիկաներում:

Սակայն այդ ընդհանրություններն ու նմանությունները դիդակտիկայի ու մասնավոր մեթոդիկաների նույնացման համար հիմք չեն տալիս, որովհետև դրանց միջև կան նաև լուրջ տարբերություններ, որոնք չի կարելի անտեսել կամ հաշվի չառնել:

Ճիշտ է, մասնավոր մեթոդիկաներն ուսուցման ընդհանուր օրինաչափություններն ու օրենքները վերցնում են դիդակտիկայից, որպես մայր գիտությունից, սակայն դրանց կոնկրետ կիրառության մեջ շատ ազատ են, որովհետև ելնում են տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից:

Այս առումով, հարկ է նկատել, որ մասնավոր մեթոդիկաները ևս իրենց հերթին զգալի ավանդ են բերում ընդհանուր դիդակտիկայում՝ ինչպես ընդունված սկզբունքների ճշտման, այնպես էլ նոր սկզբունքների մշակման ուղղությամբ, որովհետև դասավանդման պրոցեսը, որպես տեսական հետևությունների գործադրման կամ գործնական աշխատանքում դրանց կիրառության գործողություն, իր որոշակի ուղղումներն ու ճշտումներն է մտցնում դիդակտիկայի սկզբունքների մեջ, առաջադրում է գործնական աշխատանքում ծնված, կիրառված ու հիմնավորված նոր սկզբունքներ:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է մի կողմից բազմակողմանիորեն զարգացած, զրագետ, լեզվական գիտելիքների տիրապետող անձի դաստիարակելու կենսական պահանջով, մյուս կողմից տարրական դպրոցում նշված կարողությունների և որակների ձևավորմանը միտված մեթոդական համակարգի անկատարությամբ:

Նպատակն է՝ մշակել կրտսեր դպրոցականի լեզվական տարրական գիտելիքների յուրացմանն ու զարգացմանը նպաստող մեթոդական քայլաշար:

Խնդիրներն են՝ ուսումնասիրել թեմայի հիմնախնդիրներին վերաբերող գիտամեթոդական գրականություն և մշակել բնագրի շուրջ աշխատանքի միջոցով կրտսեր դպրոցականի՝ լեզվական տարրական գիտելիքների զարգացումն ապահովող մեթոդական ցուցումներ:

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակները և իրականացման ուղիները

Երեխայի ծավալած ուսումնական գործունեության արդյունավետությունը, աշակերտների վերաբերմունքը հետագա ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են նաև դպրոցական առաջին օրերի մանկավարժական հոգեբանական տեսանկյունով ճիշտ կազմակերպմամբ, այն առանձնահատկությունների հաշվառմամբ, որոնք հատուկ են վեց տարեկան երեխաներին: Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց դեկավարել նրանց զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:¹

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վեց տարեկաններն «ապրում են տարիքային ճգնաժամ, որի ժամանակ նրանց մեջ ընդգծված են դառնում հակասության ոգին, կամակորությունը, անբավարարվածությունը, «Ես ինքս» դիրքորոշումը, ըմբոստությունը, խանդը(ուսուցչի, ծնողի, մտերիմ ընկերների նկատմամբ)»: Որքան էլ որ այդ առանձնահատկությունները բազմազան են ու բազմաբնույթ, այնուամենայնիվ, օրինաչափորեն դրանք կարելի է խմբավորել:

¹ Բահաթրյան Ա., «Ուղեցույց հայ ուսուցչի, ընդհանուր մեթոդիկա և առաջին տարվա նյութի մշակումը», Թիֆլիս., 1882., էջ 18

ԿԱԶՄԱԲՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոց ընդունվող կամ ավագ նախադպրոցական տարիքի երեխայի մեջ նկատվում է օրգանիզմի բուռն զարգացում, որն ընթանում է այդ համակարգերի փոփոխություններով:

Դրանցով պայմանավորված՝ երեխան աստիճանաբար ձեռք է բերում իր ուժերին և մտավոր կարողություններին համապատասխան ծանրաբեռնվածություն կրելու հնարավորություն, որը դպրոցին պատրաստ լինելու կարևոր գործոններից է:

Տարիքային այս հատվածը բնութագրվում է իբրև ճգնաժամային և աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ: Տարիքային նախկին ստորաբաժանման մեջ ճգնաժամային էր համարվում կյանքի յոթերորդ տարին:

Պայմանավորված հասարակության կյանքում սոցիալ-տնտեսական և մշակութային պայմանների փոփոխությամբ, երեխաների հոգեկան և կազմաբնախոսական զարգացման տեմպի զգալի արագացմամբ (աքսելերացիայով)՝ այժմ այն իջել է մինչև վեց տարեկանը: Լուրջ փոփոխություններ են կատարվում երեխայի նյարդային համակարգում, մասնավորապես դա վերաբերում է գլխուղեղին: Գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վեց տարեկան երեխայի գլխուղեղի և նրա ենթակեղևի (որտեղ զետեղված են նյարդային բջիջները) քաշը հասնում է մեծ մարդու գլխուղեղի քաշի իննսուն տոկոսին: Այդ տարիքում երեխայի գլխուղեղի գործունեության վերակառուցումն ու ձևավորումը, այսինքն՝ զարգացումը դեռևս շարունակվում է, և տարիքին անհամապատասխան մտավոր ծանրաբեռնվածությունը կազդի ոչ միայն նրա ուսումնական գործունեության արդյունավետության, այլև առողջության վրա:

Վերոհիշյալ առանձնահատկություններով պայմանավորված՝ վեց-յոթ տարեկան երեխաները միևնույն գործունեությամբ երկարատև չեն կարող զբաղվել: Երկար ժամանակ միևնույն աշխատանքով ծանրաբեռնելու դեպքում ոչ միայն կընկնի նրանց աշխատանքի արդյունավետությունը, այլև կխաթարվի առողջությունը:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեխայի հոգեբանական առանձնահատկությունների համալիրն իր մեջ ներառում է անձնային և կամային ոլորտները, գիտելիքների և պատկերացումների ընդհանրացնող, դասդասող պարզ համակարգերը, որոշ ուսումնական ունակությունները, ընդունակությունները և այլն:

Ավագ նախադպրոցական տարիքում սկսվում են ձևավորվել երեխայի տարաբնույթ գործունեության և վարքի նոր մեխանիզմներ, ձևավորվում են դրդապատճառային և կայուն կառույցներ, նոր անձնային պահանջմունքներ՝ սեփական անձի ճանաչում և ընդունում, իր իրավունքների գիտակցում և մեծերի և հասակակիցների կողմից դրանք հարգելու պահանջ: Երեխաները տարիքային այս փուլում կամենում են լինել ուշադրության կենտրոնում, ձգտում են հասնել իրենց նպատակներին, սկսում են կատարել «լուրջ» պարտականություններ, հետաքրքրվում են կոլեկտիվ գործունեությամբ, ակնառու է խաղի և գործունեությամբ այլ ձևերի մեջ առաջինը լինելու ձգտումը և այլն:

Ծագում են գործունեության դրդապատճառային նոր տեսակներ, մեծերի նպատակային գործունեության շնորհիվ նրանց մեջ ձևավորվում և զարգանում են կամային վարքի հիմքեր, երեխան յուրացնում է բարեկիրթ վարքի, բարոյական նորմերի որոշակի՝ իր տարիքին հարիր համակարգ:

Կյանքի վեցերորդ տարվա ավարտին երեխան սկսում է գիտակցել իր տեղը շրջապատում, նրա մեջ սկսում է ձևավորվել իր վարքը շրջապատին համապատասխանեցնելու ձգտումը, նա սկսում է զգալ և գիտակցել իր հաջողություններն ու անհաջողությունները, գնահատել դրանք և դրսևորել համարժեք վարք:

Բացահայտ է, որ այս տարիքի երեխաներն ունեն կոնկրետ մտածողություն. նրանք ավելի դյուրին են ընկալում, հասկանում և յուրացնում այն, ինչ կապված է իրենց կենսափորձի հետ, ինչ տեսել են, զգացել, ըմբռնել և կատարել են: Ակնառու է նրանց մտածողության բազմաբնույթությունը (մասնավորապես՝ ձևերով, գույներով, ձայներով մտածելը):

Տարիքային այս փուլում երեխան իրականացնում է գործունեության երեք տեսակն էլ (խաղ, ուսում, աշխատանք), սակայն առաջատարը խաղային գործունեությունն է, որն ուսուցման բովանդակության սահմանման և մեթոդների ընտրության ժամանակ պիտի հաշվի առնել:²

Չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր երեխա ունի ուսումնական տարբեր դրդապատճառներ, և դժվար է որոշել ու միանշանակ գնահատել դրանք, որովհետև հարցազրույցի ժամանակ այդ տարիքի երեխաները հաճախակի տալիս են ոչ թո անկեղծ, խրախուսանք ակնկալող պատասխաններ, այսինքն՝ տալիս են այնպիսի պատասխաններ, ինչպիսիք իրենցից սպասում են մեծերը:

² Գյուլամիրյան Ջ. Ն., «Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում», Երևան., «Լույս», 1998., էջ 28

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուշագրավ է այն հանգամանքը, որ դպրոց առաջին անգամ ոտք դնող երեխայի մեջ անձնային փոփոխությունները կատարվում են քայլ առ քայլ, աստիճանաբար, արտաքինապես աննկատ ու փոքր ձեռքբերումների ճանապարհով (մեկ անգամ ևս կարևորում ենք նշել, որ այդ երեխան, ըստ էության, ավագ նախադպրոցական տարիքում է): Ավագ նախադպրոցականն այլևս դադարում է պարզամիտ և անմիջական լինելուց և շրջապատողների համար դառնում է առավել անհասկանալի: Մա հաստատում է այն, որ երեխայի վարքն այնպիսին է, ինչպիսին նրա ներքինն է. նրա վարքը հասկանալի է և դյուրինությամբ է «ընթերցվում» շրջապատողների կողմից: Այս վիճակը նշանակում է վարքի մեջ որոշակի մտավոր պահերի ներմուծում, որը սեպվում է երեխայի ապրումների և գործողությունների միջև: Նրա վարքը դառնում է գիտակցական, որը կարելի է ներկայացնել «ցանկացավ-գիտակցեց-կատարեց» շղթայով:

Երեխաները գիտակցում են իրենց սոցիալական «Ես»-ը, ձևավորվում է «ներքին սոցիալական դիրքորոշումը», աստիճանաբար ձգտում են իրենց տեղն ու դերն ունենալ միջավայրում, վայելել մեծերի հարգանքը, համակրանքը, ուշադրություն գրավել, աչքի ընկնել և այլն: Նրանք անչափ զգայուն են միջավայրի վերաբերմունքի նկատմամբ, և եթե նրանց ձգտումները չեն իրականանում, առաջանում են ընդվզում և բողոք: Այս տարիքում երեխաները դրսևորում են հակասական վարք «երկակի վարք», տանը նրանք կամակոր են, անհաշտ, ինքնակամ, իսկ մանկապարտեզում՝ խաղասեր, կազմակերպված և դրսևորում են ինքնուրույնություն:

ԽՈՍՔԸ, ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առողջ, նորմալ խոսքային զարգացում ապրող առաջին դասարանցին առանց դժվարությունների հաղորդակցվում է տարեկիցների և մեծերի հետ, հասկանալի, պարզ բառերով և ոչ բարդ լեզվական կառույցներով արտահայտում է իր մտքերն ու ցանկությունները: Հիմնականում ձևավորված է լինում խոսքաշարժողական կառույցը, որը լեզվի հնչյունային կողմի բավարար տիրապետման կարևոր նախապայմանն է, գրաձանաչությունն սկսելու ամենահարմար պահը:

Զարգացման բավարար մակարդակում են գտնվում դպրոց ընդունվող երեխայի խոսքի հնչյունային կազմության ընկալմանը նպաստող այնպիսի որակները, ինչպիսիք են նյարդային համակարգի զգայունությունը, ամեն ինչ ընդօրինակելու ունակությունը, լեզվական երևույթների ընկալունակությունը, խոսքի, բնության մեջ հնչող հնչյունների նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը:

Այս տարիքը մայրենի լեզվի բոլոր հնչյունների ընկալման և վերարտադրման ամենաբարենպաստ շրջանն է: Այնուամենայնիվ, լինում են նաև առողջ երեխաներ, որոնք դեռևս արտաբերման իմաստով չունեն վերջնականապես ձևավորված դժվար հնչյունները վերարտադրելու կարողությունները, հանգամանք, որը պետք է գրավի ուսուցչի ուշադրությունը և նրան ուղղորդի հստակ հնչյունային համակարգային վարժությունների կատարման:

Բուռն զարգացման փուլում են գտնվում նաև ինքնավերահսկման, սեփական արժեքների գիտակցման, խոսքի անկատարության որակները զգալու և արատները շտկելու գործընթացները: Երեխաները գիտակցում են իրենց ծավալած ուսումնական գործունեության դերն ու հասարակական արժեքը, տեսնում են միջավայրի վերաբերմունքը իրենց ուսումնական գործունեության նկատմամբ, և չնայած ուսումնական գործունեությունն սկսվում է առանց խաղային գործունեության ընդհատման, այնուամենայնիվ, այն ձեռք է բերում լուրջ գերակայող բնույթ:

Երեխաները ուսումնական գործունեությանը զուգահեռ շարունակում են դերային խաղերը, որոնց ընթացքում սկսվում են ձևավորվել խոսքի նոր տեսակներ. խոսք, որը խաղի մասնակիցներին հրահանգներ է տալիս, խոսք-հաղորդում (ծանուցում), տպավորությունները մեծերին հաղորդող խոսք, նկարագրական խոսք, դատողական և գնահատող խոսք, ձևավորվում և զարգանում են նաև մենախոսության պարզ դրսևորումներ: Երեխաներն սկսում են կարևորել ընկերների խոսքը, ընկալել խոսքային հարաբերությունները, մեծերի և հասակակիցների հետ նրանք ազատ և անկաշկանդ զրույցի են բռնվում, բավականին ճշգրիտ և ամբողջական նախադասություններով կարողանում են պատասխանել իրենց տրված հարցերին, լրացնել ու շտկել ընկերների պատասխանները, ձևակերպել պարզ կառուցվածք ունեցող հարցական նախադասություններ:

Միաժամանակ երեխաների մեծ մասի այդ կարողություններն անկայուն են, նրանցից շատերը դժվարությամբ են իրենց ասածը հաստատում փաստերով, հիմնավորումներով,

ճիշտ չեն ներկայացնում դեպքերի պատճառահետևանքային կապերը՝ ինչպես տրամաբանական հաջորդականության, այնպես էլ լեզվաոճական իմաստով:³

Երեխաների խոսքում գերակշռում են գոյականները, բայերը, նրանք ավելի քիչ են օգտագործում ածականներ, թվականներ, գրեթե չեն օգտագործում մակբայներ և այլն:

Ուսումնական գործունեությունը երեխայի կյանքի մի կարևոր և բարդ բնագավառ է: Այն մանկավարժահոգեբանական տեսանկյունով ճիշտ և անցավ կազմակերպելու, դպրոցականների համար ուսումնական արդյունավետ պայմաններ ստեղծելու համար նախ անհրաժեշտ է ուսումնական տարվա սկզբին իրականացնել ախտորոշում՝ պահպանելով հետևյալ սկզբունքները.

1. Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի սովորելու այն ուսումնական հաստատությունում, որը համապատասխանում է նրա մտավոր, ֆիզիկական և հոգեկան զարգացման առանձնահատկություններին:
2. Հոգեկան, մտավոր զարգացման մակարդակները կարող են գործունեության տարբեր ձևերի ժամանակ (խաղ, ուսում, աշխատանք) հղկվել, շտկվել, զարգանալ, եթե դրա համար կան նպաստավոր պայմաններ:
3. Երեխայի մտավոր և հոգեկան զարգացման վիճակի ախտորոշումը դպրոց ընդունվելու պահին պարտադիր է, և նրա արդյունքները՝ համապատասխան երաշխավորություններով, պիտի ներկայացվեն ծնողներին:

Դպրոցական առաջին օրվանից երեխան հայտնվում է նոր պայմաններում՝ հանդիպելով մինչ այդ իրեն անծանոթ գործունեության ձևերով պայմանավորված որոշակի դժվարությունների: Այդ դժվարությունները հաղթահարելու համար դպրոց ընդունվող երեխան պետք է ունենա.

1. **Կազմաբնախոսական զարգացման՝ տվյալ տարիքին ներկայացվող չափանիշները բավարարող մակարդակ.** կրթության օրենքով նախատեսված անձնագրային որոշակի տարիք, ֆիզիկական զարգացման՝ բժշկական ընդունված չափանիշներին համապատասխան մակարդակ, տվյալ տարիքին համապատասխան կենսաբանական զարգացման որոշակի մակարդակ (առողջական վիճակը տվյալ պահին, կրած ծանր հիվանդությունները, բժշկասոցիոմետրիկ չափերը և այլն):

³ «Հայոց լեզու և գրականություն», Գիտամեթոդական ամսագիր., Երևան., 2009., էջ 29

2. **Հոգեֆիզիոլոգիական զարգացման որոշակի աստիճան.** Բարձրագույն նյարդային համակարգի զարգացման բավարար աստիճան, հուզականային ոլորտի՝ իր տարիքին համապատասխան բնութագիր, ճանաչողական գործընթացների՝ տարիքին համապատասխան բնութագիր, պլանաչափ ու երկարատև (տարիքին համապատասխան) մտավոր աշխատանք կատարելու համար անհրաժեշտ ունակություններ, հոգեկան բոլոր գործընթացների (հիշողություն, ուշադրություն, մտածողություն, խոսք, կամք)՝ իր տարիքին համապատասխան մակարդակ, կոնկրետ և վերացական մտածողության որոշակի մակարդակի առկայություն, դրանց ճիշտ հարաբերակցություն:
3. **Ուսումնական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ որոշակի կարողությունների զարգացման բավարար մակարդակ.** ուսումնական գործունեության նոր պայմաններին հարմարվելու, ըստ այն պահանջների ու հրահանգների գործելու ունակություն, որոնք չեն հակասում նրա հնարավորություններին ու պահանջմունքներին, իր տարեկիցների հետ հաղորդակցվելու, համագործակցելու և համակեցության կանոնները պահպանելու որոշակի ունակություններ, ուսումնական խնդիրներ լուծելու իր քայլերը պարզ գործողություններով պլանավորելու, դրան համապատասխան քայլեր կատարելու ունակություններ, ուսումնական գործունեություն ծավալելու, ծրագրային նյութը յուրացնելու համար անհրաժեշտ լեզվական մտածողության տարրական մակարդակ, նախադպրոցական դաստիարակության ծրագրով նախատեսված գիտելիքների, ունակությունների և հմտությունների որոշակի պաշար, որոշակի բառապաշարով, պարզ և ընդարձակ նախադասություններով խոսք կառուցելու, հարցեր տալու, ուսուցչի և ընկերների տված հարցերը հասկանալու, իմաստավորելու և դրանց պատասխանելու ունակություններ, փոքրիկ բանաստեղծություններ, հանելուկներ, շուտասելուկներ արտասանելու, ունկնդրած հեքիաթները, պատմվածքները բնագրին հարազատ վերարտադրելու, դրանց բովանդակության և գործող անձերի վերաբերյալ տրված պարզ հարցերին պատասխանելու ունակություններ, ուսուցչի տված հանձնարարությունը հասկանալու և այն կատարելիս ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, մատների նուրբ շարժումների ներդաշնակ և բավարար զարգացման մակարդակ:

Ուսումնական գործունեությանը երեխայի պատրաստակամության աստիճանի մասին անհրաժեշտ է ունենալ տեղեկությունների ևս մի քանի խումբ, որոնք կարելի է ստանալ ծնողներից կամ նրա խնամքով զբաղվող այլ մարդկանցից.

- 1. Երեխայի բնավորության առանձնահատկությունները, ուսումնական գործունեության նկատմամբ նրա վերաբերմունքը.** ջանասիրություն, փոքրիկ բանաստեղծություններ, երգեր սովորելու նրա ցանկությունն ու ընդունակությունը, հաշվելու, նկարելու, կտրելու, սոսնձելու պարզ առաջադրանքներ կատարելու կարողություններ, որոշակի ժամանակահատվածում միևնույն գործողությամբ զբաղվելու ունակություն և այլն:
- 2. Երեխայի հետաքրքրությունների շրջանակը.** ինչն՞վ է սիրում զբաղվել, ինչպե՞ս է անցկացնում ազատ ժամանակը, ի՞նչ խաղալիքներով է սիրում խաղալ, հեռուստատեսային ի՞նչ հաղորդումներ է սիրում դիտել և որքան ժամանակ է անընդմեջ տրամադրում հեռուստատեսությանը, ի՞նչ ստեղծագործություններ է սիրում ունկնդրել, պատմել, ի՞նչ թեմաների շուրջ է սիրում զրույցի բռնվել, ի՞նչ հարցեր է տալիս և այլն:
- 3. Միջանձնային հարաբերությունները.** զգայո՞ւն է մարդկանց նկատմամբ, ինչպե՞ս է իրեն պահում տարեկիցների (մեծերի) հետ հաղորդակցվելիս, որևէ գործ կատարելիս համագործակցո՞ւմ է նրանց հետ, սուտ խոսո՞ւմ է, հարմարվելու հանդուրժողականության, ապրումակցման որակների առկայությունը և այլն:
- 4. Աշխատանքային կարողությունները.** տնային գործերում ո՞ւնի ոչ բարդ հանձնարարություններ, ինքնասպասարկման, հիգիենայի տարրական կարողություններ, սիրո՞ւմ է կատարում իրեն հանձնարարված գործերը, սիրո՞ւմ է մասնակցել հասարակական հանրօգուտ աշխատանքներին և այլն:
- 5. Գեղագիտական հետաքրքրություններն ու կարողությունները.** ինչպե՞ս է վերաբերվում երաժշտությանը, նկարելու, ծեփելու ուղղությամբ ինչպիսի՞ կարողություններ ունի, ի՞նչ կինոնկարներ է նախընտրում դիտել, հաճախո՞ւմ է մանկական թատրոն և կարողանո՞ւմ է պատմել իր տեսածի մասին, ուշադի՞ր է բնության փոփոխությունների, բնության ձայների և երևույթների նկատմամբ և այլն:
- 6. Ընկերային հարաբերությունները.** ինչպիսի՞ երեխաների հետ է սիրում ընկերություն անել, իրենից փոքր (մեծ), ֆիզիկապես ուժեղ (թույլ), ենթարկվող (լիդեր), և այլն,

ինչպե՞ս է վերաբերում նրանց, ինչպե՞ս է արտահայտվում ընկերների մասին, ի՞նչն է գնահատում ընկերների մեջ և այլն:

Այսպիսով՝ դպրոցական ուսուցմանը պատրաստ կարելի է համարել այն երեխաներին, ովքեր ոչ միայն անձնագրային տարիքով և ֆիզիկական տվյալներով համապատասխանում են որոշակի չափանիշների, այլև կարող են մտածել ու ինքնուրույն գործել, համագործակցել տարեկիցների հետ և հասել են հուզական-զգացմունքային որակների զարգացման որոշակի աստիճանի, այսինքն՝ նրանց մտածողությունը, կամքը և հույզերը ներդաշնակորեն համակցված են:

Այս ամենի առկայությունը մանկական գիտակցության մեջ հանգեցնում են նրան, որ երեխան դպրոց ընդունվելու պահին իր համար նոր՝ դպրոցական սոցիալական դերին, ուսումնական գործունեության և կոնկրետ ու ընդհանրացված գիտելիքներ ձեռք բերելուն պատրաստ է լինում: Այսինքն՝ նրա մեջ ձևավորված է լինում պարբերական ուսուցման համար անհրաժեշտ հոգեբանական և անձնային պատրաստվածություն:

Յուրաքանչյուր 6-6.5 տարեկան երեխա իրավունք ունի սովորելու՝ անկախ նրա ուսումնական գործունեության համար պատրաստ լինելու աստիճանից:

Պարզապես դպրոց ընդունվող երեխայի ուսումնասիրությունը, ուսումնական գործունեության պատրաստակամության մակարդակին ներկայացվող վերոհիշյալ պահանջների իմացությունն անհրաժեշտ են, որպեսզի ճիշտ ընտրվի երեխայի դպրոցը, տեսակը, հոգեբանամանկավարժական տեսանկյունով ճիշտ համալրվեն դասարանները և ուսումնական գործունեության առաջին փուլում մեթոդապես հմտորեն կազմակերպվի կրթադաստիարակչական գործընթացը, ինչպես նաև բավարար օգնություն կազմակերպվի ծնողներին՝ նրանց երեխաների ուսման և զարգացման համար օպտիմալ պայմանների ստեղծման գործում:⁴

⁴ Խաչատրյան Ս. Գ., «Ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում», Գ., 2002., էջ 53

Եզրակացություն

Այսպիսով, ի տարբերություն հայոց լեզվի մեթոդիկայի զարգացման պատմության նախախորհրդային շրջանի, մեր օրերում մեթոդիկայի զարգացման և մշակման պրոցեսն ընթանում է հասարակության, դպրոցի ու մանկավարժական լայն հասարակայնության ակտիվ միջամտության պայմաններում, որովհետև մանուկ սերնդի կրթության ու դաստիարակության հարցերը մեր օրերում համաժողովրդական արժեք են ստացել:

Այս առումով էլ մեթոդիկայի զարգացման ու մշակման գործում այժմ հսկայական է նաև դպրոցի և առաջավոր ուսուցչության դերը, որոնք ժամանակակից մանկավարժության, հոգեբանության ու լեզվաբանության հետ միասին ուղղություն ու ընթացք են տալիս մեթոդիկայի հետագա զարգացմանը:

Այժմ հայոց լեզվի մեթոդիկայի զարգացումն ընթանում է նոր՝ ճյուղային մեթոդիկաների մշակման ուղիով, որը նրա հետագա մշակման, ծավալման, խորացման և կատարելագործման համար մեծ հնարավորություններ է ստեղծում:

Վերջին շրջանում հանդես եկող ճյուղային մեթոդիկաները, ինչպիսիք են գրաճանաչության, քերականության, ընթերցանության և խոսքի զարգացման մեթոդիկաները, մայրենի լեզվի մեթոդիկայի հետագա զարգացման այդ նոր ուղղության արդյունքն են:

Միջառարկայական կապերի ապահովման ու օգտագործման պահանջից ելնելով՝ այժմ գնալով քաղաքացիական իրավունք ու գիտական ճանաչում է գտնում նաև մեթոդիկան ըստ դասարանների մշակելու սկզբունքը: Պետք է նկատել, որ տարրական դասարանների համար այսպիսի մեթոդական ձեռնարկների գործնական արժեքը շատ բարձր է, որովհետև դրանք ապահովում են միջառարկայական կապերի ճիշտ ու տեղին օգտագործումը՝ հիմք ունենալով ուսուցման կոնկրետ օբյեկտն ու սուբյեկտը, այս կամ այն դասարանի աշակերտին ու ծրագրային որոշակի նյութը: Մեթոդիկայի այս տարատեսակը ևս առաջիկայում հավանաբար լայն տարածում կգտնի:

Գրականության ցանկ

1. Բահաթրյան Ա., «Ուղեցույց հայ ուսուցչի, ընդհանուր մեթոդիկա և առաջին տարվա նյութի մշակումը», Թիֆլիս., 1882
2. Գյուլամիրյան Ջ. Հ., «Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում», Երևան., «Լույս», 1998
3. «Հայոց լեզու և գրականություն», Գիտամեթոդական ամսագիր., Երևան., 2009
4. Խաչատրյան Ս. Գ., «Ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում», Գ., 2002